Ճապոնի երկրաշարժները, Հարաւային Ամերիկայի հանրապետութիւնների յեղափոխութիւնները, Մեքսիքայի աւազակութիւնները, չինական սովը, Վեզուվի եւ Էտնայի հրաբխային գործունէութիւնը, հրէական պօգրոմը, փարիզեան նորաձեւութիւնները, հնդկական ժանտախտը, եւ հայկական ջարդերը՝ համաշխարհային կեանքի ամենօրեայ յայտագիրն են կազմում: Բազմահազար թերթերի ընթերցողները, եօղօֆորմին վարժուող հիւանդի նման, վարժ են այդ լուրերին: Գրերի վրայ ցատկըտող աչքը հրէշային մակաբոյծ է եւ իր ամենօրեայ կերակուրն է պահանջում: Միտքը բըթացած է, խիղճը թմրած:

Այսօր, ընկղմող անդրատլանտեան նաւերի մօտ՝ խեղճ նաւակ ենք, աննշմարելի եւ գըրեթէ անյայտ:

Ու ահա, եկել ենք, հայերս ամէն կողմից, փոթորիկների հանդիպած թռչունների երամների մնացորդներ եւ բոյն ենք փնտռում:

* * *

Արարատից, Նոյեան տապանը իջել է նորէն: Եկել է վանեցի չարաչահը՝ շուկայում ոսկի է ծախում: Հայ վարժապետը, իր սրտի մաշուած գիրքը յանձնում է փոշիներին: Կղերականը մտել է ստուերի տակ եւ կասկածով նայում է խաչին: Գիտնականը մոռացել է իր գիտութիւնը եւ ամէն մարդու յայտնի ճշմարտութիւններ է պատգամում: Խանութպանը հին ապրանքների մօտ մարտիրոսացել է, իսկ գիւղացին Ֆրանսայի դէմ բողոքներ է կազմակերպում:

Լենինը, որի հետ Ժընէվում, աժան ճաշ էինք ուտում, եկել է Հայաստան:

Բարե՛ւ:

* * *

Աժան ճաշ էինք ուտում...

Ակնունին, Սիամանթօն, խեղճ եւ բարի Մինասեանը, Արամ Զարըգը եւ ուրիշներ ժողովւում էին Cafe Lyrique–ում: «Դրօշակ»ի խմբագրատունը, բարձր ծառերի տակ թաղնուած բերդ էր, ուր խորհրդաւոր դաւադրութիւններ էին տեղի ունենում:

Երկրից, մարդիկ էին գալիս. մի քանի օր մնում եւ շուտով մեկնում: Շշուկներ էին պըտտում: Առասպելներ էին պատմում: Եւ սակայն, ամէն օր, Ակնունին եւ իր ընկերները, ժամը չորսին, կաֆէյում իրենց սուրճն էին խմում՝ իբրեւ թէ ոչինչ չի պատահել:

Սիամանթօն գալկահար մի երիտասարդ էր: Լճի ափին երազկունման էր գալիս: Ասում էին թոքախտաւոր է:

Cafe Lyrique–ի աշխարհը ուրոյն աշխարհ էր, նահապետական եւ հանդիստ:

Մենք, մի քանի երիտասարդներ, 17–18 տարեկան, պատկանում էինք ուրիշ բանակի: 1905–ի յեղափոխութեան բեկորները վայր էին ընկել Պլէն Պալէ փշրուած նաւակների նըման: Պլեխանովի շուրջը համախմբուել էին վրացիները, իսկ մենք՝ Լենինի կողմնակիցներն էինք: «Ռադուգա» անունով ամսագիր էին հրատարակում: Միխա Ցխակայան եւ բըժիշկ Սէմաշկօն մեզ առաջնորդում էին: Խումբ էինք կազմել եւ Բօգդանովի հետ էմպիրիօ–կըրիտիցիզմ էինք ուսումնասիրում եւ Կարլ Մարքսի մօրուքը Մախի փիլիսոփայութեան մէջ թաթախում:

Պլեխանովը չէր սիրում հայերին, Կաֆէ Լիրիկի կողմը քմծիծաղով էր նայում եւ վըրաց նախկին իշխաններին Էնգելսի շքանշաններ էր բաժնում: Մինչ բոլշեւիկեան ուղղութիւնը, վերջ ի վերջոյ, համակրութեամբ էր նայում ամէն տեսակ յեղափոխական գործունէութեան վրայ:

Մեր նշանաբանն էր — Լենինը ասել էր — պարտուած ռուսական յեղափոխութեան ալիքները նետել Եւրոպա: Դիմել բոլոր միջոցների, մինչեւ իսկ անիշխանական:

Ժողովներ էինք անում: Ժողովրդական տան փոքրիկ սրահում երկար վիճաբանում էինք: Երեկոյթներ էինք սարքում ու Մարքսի, Էնգելսի, Կաուցկու եւ ուրիշների բրոշիւրների մէջ հնձում անտանելի ձանձրոյթի չորցած հասկերը:

Երբեմն գալիս էր Լենինը: Ամէն բան տակնուվրայ էր անում: Այդ փոքրիկ մարդու երեսին դաժան մի գաղափարի լոյսը կար: Նրա շուրջը ամէն ինչ լըջանում էր, ամէն ինչ վերին աստիճանի կարեւոր էր դառնում: Նրա մի նայուածքը, մի խօսքը բաւական էին, որպէսզի մարդ նետուի կրակի մէջ: Յուսախաբութեան ամենասոսկալի օրերին, երբ այլեւս ոչ ոք չէր հաւատում, որ ցարական ռեժիմը կարող է փոխուել, Լենինի մի նախադասութիւնը, միշտ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան